


ՀԱՍՏԷ

Rédaction du Journal Arménien "ARCHALOUYCE" Hotel d'Arménie S. Bulbulian (Egypte) LE CAIRE



ԱՉԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Ն Կ Ա Ի Հ Ա Յ Ա Ք Ե Ր Ք

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի Չ Ո Ր Ե Ք Տ Ա Ր Թ Ի Օ Ր Ե Ր Ը

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՐ

ԵՂԵՐ

Տպելիան 40 Եգ. օգյ

Վեցամսեայ 20

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Տարեկան 12

Ապագիկ բաժանորդագրութիւն չի ընդունուիր :

Ծանուցումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին :

Զեղարկները եւ չեն տրուիր :

ԹԻՒՆ 9

ՏՆՕՐԷՆ - ԽՄԱԿԻՐ ԵՂԵՐԷ ԹՈՐՈՍԱՆԸ

Արտոնեայ եղիպսական

Կառավարութեան

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՆՁԱՊԻՏ Ս. ՊԻՆԼՊԻՆԸ

ԹԻՒՆ 9

ՊՕՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ

Մեծ եղիպտոսի մը վերադարձաւ մեր մէջ :

Ն . Վ . Պօղոս փաշա Նուպար որ երկար ամիսներէ ի վեր ճշմարիտ ուխտագնացութիւն մը կը կատարէր Եւրոպայի մէջ, մէկ մայրաքաղաքէն միւսը այցելելով, Հայաստանի նուիրական դատը պաշտպանելու համար, իր երկրորդ հայրենիքը վերադարձաւ :

Եթէ ցեղային, աւանդական և ընտանեկան կապերով Պօղոս փաշա Նուպար եղած է մին այն մաքուր հայերէն որոնք տխուր պատմութեան մը դժբաղդ իրադարձութիւններուն մէջ կարողացած են պահել իրենց նախահայրերու լաւագոյն յատկութիւնները, սողոյգ է նաև թէ՛ Եղիպտոսի մէջ ծնած ու զաւակն ըլլալով Մեծ պետական մարդու մը՝ որուն նմանը եղիպտոսի պատմութեան մէջ գոյութիւն չունի, սըրտով ու հոգով եղիպտոսի մըն է :

Անոնք որ անկեղծօրէն կը սիրեն այս երկիրը՝ ուր կ'ապրին և որուն նուիրած են իրենց երիտասարդական ամբողջ կորովը նետելով անոր մէջ իրենց զաւակներու արմատները, մասնակցելով նաև գոյութեան ահեղ պայքարին, հրպարտօրէն կը յարգեն Պօղոս փաշա Նուպարը :

Թող ներուի մեզ միջանկեալ մը բանալ :

Եղիպտոս այժմ փոխանցուած չըլլան մը կը բողոքէ, այնպէս որ՝ առանց պատմութեան վրայ յետադարձ ակնարկ մը ձգելու խիստ դժուար պիտի ըլլար անմիջապէս ճշգրիտ գաղափար մը կազմել մարդոց արժանիքին ու դէպքերու կարևորութեան մասին : Հետեւեալ տարբեր տարբեր կարծիքներ կրնան երևան գալ եղածներուն վրայ՝ որոնց վկաններն ենք ու մարդոց մասին՝ որոնք իշխանութեան գլուխն են :

Բայց այն երկար տարիները՝ որոնք հեռի կը պահեն մեզ այն շրջանէն՝ յորում Նուպար փաշա Նու-

պար եղիպտոսի կառավարական ղեկըն ունէր իր ձեռքին մէջ, կը թողարկեն մեզ գնահատել ո՛չ միայն անոր կատարած գործին մեծութիւնը այլ նաև իր հետապնդած իտէլին գեղեցկութիւնը :

Պարապ տեղը չի գործածեցինք իտէալ բառը՝ որ արդի քաղաքականութեան մէջ ակնհայտ շատ կիրարկուածն է : Երբ նախապար մը իր երթալիք ճամբան կ'անդիտանայ իր առջև չ'ունենալով անդրդուելիութիւն հետապնդած նպատակին իրական պատկերը, պատահական մը կը դառնայ դէպքերէն ծածանուած՝ օրը օրին միայն ապրելով :

Նուպար փաշա այնքան սիրեց եղիպտոսը որ կարծիքներու ծայրահեղ հակառակութեան և հակամարտ գէպքերու խառնարանին մէջէն իսկ կարողացաւ ընդհանրել ազատութեան ճամբան՝ ուր ինք կ'առաջնորդէր այս երկիրը :

Բոլոր անտեսական, քաղաքական և կամ ընկերական հարցերու մէջ այս երկիրն ամբողջական ազատագրութիւնը փնտռեց միայն :

Մխիթարիչ՝ մանաւանդ խիստ օգտակար պիտի ըլլար պատմական ընել այն շրջանին՝ ուր Նուպար փաշա ուղղակի կամ անուղղակի խառնուեցաւ եղիպտոսի գործերուն :

Սոյն պատմականէն երիտասարդութիւնը — միայն երիտասարդութիւնը պէտք է ըսել — պիտի ըստանար կազդուելի տեղեկութիւններ որ իրեն մէջ փրկող հաւատքը պիտի կենդանացնէին :

Բայց մենք հիմայ լաւագոյնը կրնինք՝ հիանալով քաջութեան, յարատեւութեան և քաղաքական սուր մտքի կենդանի օրինակին վրայ զոր իր օրդին Պօղոս փաշա կուտայ մեզի :

Այս պահուս՝ երբ Պօղոս փաշա եղիպտոս կը վերագաւնայ վերջստանալու համար իր հանգիստը՝ որուն մեծագէտ արժանի է, խիստ արդարացի կը գտնենք արտացոլացընել այն կարևոր գործը, զոր

անխոնջ եռանդով հետապնդեց այնքան եղիպտոսի՝ որքան Հայաստանի բարիքին :

Պօղոս փաշա՝ իր փառապանծ հօրմէն կը տարբերի սա՛ր բանով որ իր մէջ աւելի հակում մը կայ երբէք չի խրոչելու իր ընտրած ճամբուն դժուարութիւններէն, և մէպուսացնելու զանանք ի նպաստ իր առաջադրած նպատակին :

Ան՝ յառած է իր աչքերը շարունակ դէպի իտէալ մը և գործնական ու նուրբ ըմբռնում մը ունի յաջորդական իրագործումներով պսակելու համար զայն :

Պօղոս փաշա լիկ քաղաքական անձնաւորութիւն մը չէ՛ ունենալով իր մէջ պետական մարդու մը բոլոր ձիրքերը, գիտուն մըն է միանգամայն՝ և եղիպտոսի երկրագործական ասպարէզին վրայ խորունկ հետքեր թողած է :

Իրդարև կարելի չէ մտնալ իր կատարած գործ իբր երկրագործ և իր բեղուն աշխատակցութիւնը Բըրէնս Հիւսէին փաշաի՝ Խոնիվական Ընկերութեան մէջ :

Եղիպտոսի հողին բարօրութեանը տրուած թախը չի կրնար կասել՝ և Պօղոս փաշային կ'իշխայ այդ արժանիքին մեծագոյն բաժինը :

Սակայն այն վայրկեանին՝ ուր Պօղոս փաշա Նուպար կ'երազէր թերևս աւելի մեծ և աւելի՛ օգտակար ծառայութիւն մ'ընել եղիպտոսի, հրամայող ձայն մը հրաւիրեց զինք իր գործունէութիւնը ցոյց տալու գործի մը մէջ՝ որուն չէր կրնար չի փարել հոգեկին :

Արդէն Պօղոս փաշա հայերուն համար եղած է միշտ մէկն այն անձնաւորութիւններէն՝ որոնց կուղղէին անոնք իրենց յուսալիր նայուածքները շատ լաւ գիտնալով թէ՛ անչահախնդիր նեցուկ մըն էր այն :

Յանկարծ ողբերգական օրերը վրայ հասան և ամէնքն ալ զգացին որ, ազգին կենսունակ ուժերը տրամադրելով է որ դժբաղդ Հայաստանը պիտի փրկուի :

Մեր այս թերթին մէջ՝ ուր միշտ բարեկամ եղած ենք կոտորուողներու առանց ազգի կամ կրօնի խտրութեան և աններող հանդէպ մտրդասպաններու, ի՛նչ գրօջի ալ պատկանին անոնք, Հայաստանի ան-

լուր տառապանքներու վերջուշումը չի պիտի ընենք :

Պահ մը՝ այսինքն կարմիր-Սուլթան, կոչուածին գահընկեցութեան ատեն կարծուեցաւ թէ մարդկային իրաւանց յայտարարութիւնը որով երիտասարդ թուրքերը կը պարծենային, Սէլանիկի դաւադիրներուն իբր քաղաքական հիմ պիտի ծառայէր : Սակայն Ատանայի վայրագ կոտորածներէն վերջ համոզում գոյացուցինք որ՝ այսօրուան թուրքերը երէկուան թուրքերէն բնաւ չեն տարբերի : Հայկական լքուած նահանգներուն մէջ, մարդկային կեանքը ապահովելու համար Եւրոպայի կողմէ եղած միջամտութեան վրայ չենք ուզեր ծանրանալ :

Ճիշդ այն ատեններն էր՝ երբ Պօղոս փաշա բեմ եկաւ և իբր դեսպան Հայաստանի՝ Մայրաքաղաքէ Մայրաքաղաք այցելեց պաշտպանելու համար նուիրական դատը :

Դիւմանս այդ մասին հաւատարմութիւններուն ամենէն գեղեցիկը տրուած էր յօդուածի մը մէջ, զոր վերջերս արտատպեցինք : Պօղոս փաշա ուր որ գնաց ընդունուեցաւ այն մեծ յարգանքով որ վայել է ընդհանրապէս Իրաւունքի և Արդարութեան ասպետներուն :

Բայց և այնպէս դժուարութիւններ կային ցոյցած իրեն դէմ : Հայկական հարցը Պէրլինի դաշնագրով որոշուած չէր միթէ :

Թուրքիա պարտաւորութիւն չէր ստանձնած Անատոլիի իր քրքիստանեայ հպատակներուն կեանքն ու ինչքը ապահովելու :

Ուրեմն դիւանատուններու ներկայացող Դեսպանը կը նմանէր աւելի պարտապահանջի մը՝ որ երկար ատենէ ի վեր անվճար մնացած իր մէկ պահանջը կուգար գանձել, ոչ թէ պարզ խնդրարկուի :

Բարեբաղդաբար Ռուսիա ըմբռնեց այլ ևս թէ իր անտարբերութիւնը Փոքր-Ասիոյ մէջ իր ունեցած ազդեցութեան ուժգին հարուած մըն է :

Անկլիոյ և Յրանսայի մէջ Պօղոս փաշա պատրաստ գետին մը գրտաւ և վերջերս ալ Գերմանիոյ կայսեր յաջողեցաւ ընդունել տալ Ռուսիոյ կողմէ յղացուած բարենորոգումներու ծրագիրները :

Հայաստանի մասին հառափառութիւններուն համաձայնութիւնը կատարեալ էր և երիտասարդ թուրքերը պարտաւորուեցան տեղի տալ Դիւանագէտ-հայրենասէրի բընորոշ գիծերը միայն իր իմացական նրբութիւնը և անսպառ կորովը չեն, Ան ունի նաև ներքին ուժ մը՝ որ բարձր մտքի մը կուտայ, յանուն ապրելու ուզող ժողովուրդի մը խօսելու խղճմանը:

Պողոս Նուպար փաշայի մեծապէս սատարեց նաև բոլոր հայերու համերաշխութիւնը:

Անոնց համար՝ որոնք այս գոթազդ ժողովուրդին պատմութեանը հետեւած են, խիստ նշանակելի իրողութիւն մըն է առ:

Ամբողջ հայերու համերաշխութիւնը առաջին քայլն է դէպի ազատագրական ու մարդկային լուծումը:

Ինքզինքը զսպել և չափաւորել նկարագրի շատ աւելի մեծ ուժ մըն է քան աղմկայից ցոյցերը:

Կ'երևայ թէ Պողոս փաշա կըրցած է հասկնել հայերուն այս բանը: Աւ. Ռեւորմ. Թարգ. ՎէՎ. Ռ. Գ.

Ա. Ն. Ա. Կ. Կ. Ա. Լ. Մ. Ը.

Մէկ քանի շաբթիցն տպագրութեան պիտի յանձնուի «Արշալոյս» տպարանին մէջ «Արշիմբ» անունով պատկերազարդ Տարեցոյց - Ուղեցոյցը, որուն պատրաստութիւնը տասնէ աւելի տարիներու հետ կը խօսի:

Սոյն տարեցոյցին մէջ որոշած ենք ունենալ Մանկական բաժին մը, մէկ երկու հարիւր 2-10 տարեկան մանուկներու յատուկ, որոնց փոքրագիր լուսանկարները, անուններն ու մականունները եւ ծննդեան թուականները միայն պիտի հրատարակուին:

Անոնք որ կը փափաքին այս բաժինին մէջ տեղ ունենալ, թուականէն մինչեւ մէկ ամիս պէտք է գրին «Արշալոյս» Տպարանը, պէտք եղած մանրամասնութեանց ծանօթանալու համար:

ԿԵՍԱՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՇՐՋԱՐԵՐԱՎԱՆ

ԹԱԼԱՍ 2)20 Փետր. 1914

Մեծայարգ Տիարք,

Մանկապարտէզի մանկավարժական կրթութիւնը դարուս կենսական պահանջն էլ ըլլալով տեղոյս ներկայ երկսեռ երիտասարդութիւնը զայն քաջ հասկցած՝ և թաղիս երկսեռ հրեշտակիկներն փողոցներու տիպով ու փոշիին և ինկած բարքերու մահացու ազդեցութենէն զերծ պահելու նախանձախնդրութեամբ, թաղիս Այրգեան աղկանց Վարժարանը Մանկապարտէզով մը օժտել փափաքած և առ այդ շինիչ ներկայացումով և ձեռագործի վիճակահանութեամբ նախնական գումարը հայթայթած ու զողովը քայլերով ճամբայ ելած է:

Սակայն, Մեծայարգ Տիարք, թաղիս և մանաւորապէս թաղիս համայնքին տնտեսական աննախանձելի վիճակը նկատի առնելով հեշտ է գուշակել թէ՛ առանց օժանդակութեան հեռուորե կրթութեան զոյցած չնչին գումարով ո՛չ թէ անոր յարատեւութիւնը ապահովել, այլ սկսուած ներկայ շրջանիս իսկ շարունակել անկարելի է:

Արդ՝ ներկայիս յանուն անմեղ մանկուտոյն թախանձագին կը խնդրենք որ առ այս տեղոյդ կրթասէր ազգայնոց միջև հանգանակութիւն մը կազմելով՝ գոյացած գումարը ապահով եղանակով մը մեր հասցէին ղրկել հաճիր, որպէսզի ժամանակին կարենանք տեղական թերթին մէջ նախառուաց ցանկը հրատարակել: (Ծ. Խ. — Պէտք է ըսել թէ թաղիս գիւղաքաղաքն ալ իրեն յատուկ դաւառական թերթն ունի. բան մը՝ որ միութարակն է կրնանք ըսել:)

Վստահ ձեր կրթասէր ջանքերուն, կանխամտոյց շնորհակալեօք և խորին յարգանքներով մնամք ի Դիմաց Մանկապարտէզի Հոգաբարձութեան Թաղաոխր Վարի Թաղին Ատենապարտ Ատենապետ Ե. Տեր Մարտիրոսեան և Կ. Մարտիրոսեան ԱՆԴԱՍԻ և Սահակեան Յար Սեպանեան

ԾԱՆՕԹ. — Յօժարակամ հրատարակել յետոյ Կեսարիոյ Թաղիս Գիւղաքաղաքին ազգայնոց սոյն կրթասիրութիւն բուրով ԿՈՉԸ, մեր կողմէ հրաւեր կը կարգանք Եզրպտահայ ազգայնոց ընդհանրապէս և Կեսարացի ազգայնոց մասնաւորապէս որպէսզի անարձագանք չի թողուն սոյն հրաւերը և իւրաքանչիւրը ըստ կարի մասնակցի՝ երբ ներկայանայ իրենց Հանգանակիչ Մարմինը իր նուիրատուներով:

Ուրախ ենք ծանուցանելու միանգամայն թէ՛ Տիար Վահան Բուլտեան՝ Կեսարացի աշխոյժ ու պատուական երիտասարդը՝ ուրիշ մէկ երկու անձերու հետ յանձն առած է այս նուիրական ձեռնարկին բոլոր աշխատութիւնները, և ընդ հուպ նուիրատուներու առաջին ցուցակին հրատարակութեան բաղդին պիտի արժանանանք:

Կ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն
«Արշալոյս» ի ամբողջ Ռումանիոյ գործակալութիւնը ստանձնած է Տիար Կ. Փիլիպպոսեան, որուն պէտք է գրիմել թերթին վերաբերեալ ամէն գործերու համար:
Մեր գործակալին հասցէն է,
Mr. G. B. Pilibossian
F. American
83 St. Mangalia
(Roumanie) Constantza

Նոյնպէս Արարկիբի գործակալն է Տիար Միսաք Ա. Սուրեան, որուն պէտք է գրիմել թերթին վերաբերեալ բոլոր գործերու համար:

ԵՐԿԻՆԵՐԻ ԿԱՍԱՆԻՑ

Արիւնոյն ճաճանչներն՝ արիւնից ներկուած ծուխից շմորած՝ Թաւալազը որ իջնուէին, ըշտապ լեռներից անդորր, Ձրգած ետեւից լուսածիր կարմիր մրտայլով պատած: Ողբ ու հառաչանք թունդ էին տալիս լեռները բոլոր:

Հովտի մը առջեւ՝ ուր դաշտանման վայրէ տարածվում, Ժայռերի ծայրից, մինչ ստորտը լեռան մը հսկայ, Կանաչ խոտերից պծնուած չրքեղ հեշտագուարճ դիրքում, Եւ ուր ստիակներն հուսկ լուկ էին դէպքէ մ'առօրեայ:

Հոն այն դաշտին վրայ, հովտի խորշերում առուաց երկայնքին Քով քովի շարուած այլանդակ տեսքով... հէնց անգամահատուած Արեան երկղներ գլուխից մինչ կուրծք՝ կուրծքից էլ անդին... Ինկած գիւղները զեզիրում էին: հոգեով առ Աստուած...

Ա. Ա. Է. կողմերից լսելի լինեն խոր հուշանքներ Գանգատի միմունջք ցուրտ գեղգեղանք վրէժի բողբոջ, Մարմնոյ անդամներ, հատուած գլուխներ, Չախջախուած ազգրբեր Հոս հոն գալարուեն ողբան աղէկէզ Աստուած են կանչում... Լեզուներն այլեւս՝ լուկ են այնում, միայն հոգիներն են՝ որ սաւառնին այն կիսակենդան, դիակները վրան, Որոնց ապաստան լուս անարձագանց բարձրաբերձ սարերն Գրլուխին ծըռած, մարդկային այս մեծ՝ ոճիրը կ'ողբան...

Յանկարձ գիւղներն ընդոտ ցրցուցին ոտքի կենալով, Ծիջած հայեացքներ՝ յառելով դէպի սկամորն երկնքին, Բարձրագոյ ձայներ յանկերգի նրման՝ որոշ բոսերով... Լուսեցին երկար՝ մեղմ ու անսասան նման աղօթքի:

«Տէ՛ր ի՛նչ կեանք է այս ինչո՞ւ մեր աստղեր շուտով մարեցիր «Երնէկ թէ կ'ընթաց այնպիսի չը գայինք... բայց ինչո՞ւ ծնանք «Միթէ մեր արեամբ հոգը ներկելու. թէ բախտախնդիր «Թշուառ ու անոք զաւակ գիեցնել «սուգի արգասիք»:

«Թէ ո՞չ մ'իմուրտն այնպիսի անձիւր լաց կոծ ու ողբով «Լեցնելու համար մեր ծընողքներին հոծանքով անուռն, «Որոնք մեր կեանքից՝ մեր մահից յետոյ, աղի արցունքով՝ «Ողբան, զեզիրին մեր զաւակաց հետ «թշուառ ու անուռն»:

«Տէ՛ր, ինչո՞ւ ցատուռ արհաւիրքդ ամէն, մեր վրայ ես թափում «... Ինչ հագիւ մեզնից քրտան քայլ հեռի հարուստն երջանիկ «Իւր լի, անթերի չէն չող ընտանեաց՝ ծընողաց գրկում, «Ապրում է զուարթ՝ անխընով անհոգ, անվիշտ խաղաղիկ, «Մեր վրչտերն եթէ նրանց հետ բաժնես՝ աղէկ չի՛ լինում...»

Եւ մէկ էլ ահա երկնքի կամարն՝ ճեղքուեց լուսածիր, Որոտ՝ մ'ամենի թունդ արձագանգուեց լեռներից խորքեր... «Ջորութիւնը հրեղէն» պարզուեցին այնում շարքերով անձիւր... «Եւ որոնց մէջից, Արարչին գահը՝ փողփող ցուրումէր»:

«Եկիրք երկնային գոտ մահաստուռն ձայնով հնչեցին, Լոյս մ'ակնախրտից երկնից սրբուեց հովտի երկայնքում, Եւ դիակներին այլանդակ գանկներն հուսկ վեր ցրցուեցին, Խոստովանութեան բացուել էր «գուրը Ահեղ Ատենին»:

Եւ ահա ձայն մը. քը՛արից թրթռուն՝ սրնգից քաղցրալիւր՝ Ձայն մը երկնասառք՝ եկա՛ւ զարթեցնել աբրուանջով զինուած Դիակներին՝ որ երկիւղից սարսուռն, լոյսերից էլ արբըխ Ըսպասում էին. «Լսելու հազար ականջներ բացուած...»:

«Էլի՛ր կոծում էք, որոտայ ձայնը խորիտ զայրալիւր, «Դէն չէ՛ շիջանք դարերից ի վեր գանգատին ձեր կայծ, «Յե՛րք պիտ աղիւսէք, զեղուն յուսերով — յոյսերով պատիր «Աստուած եւ ձեր կեանքն վայելք աշխարհի մոտացման տուած

«Աստուած սովրեցուց որ դուք ձեր ձեռքով զէնքեր պատրաստէք, «Խը՛րախներ կազմէք՝ վրիժալի կոուին, դաշտը սըլանաք, «Միեղնէք ձեր եղբայրքն՝ ձեր նմաններին արիւնը ձեռքէ, «Փոխազարձարար նրբանցից եւ դուք նոյն մահն ստանաք:

«Եւ կամ հարուստին խօսքին անսալով, տուն ու տեղ ձրգած «Ձաւակ, ընտանիք, հայր, մայր թիւր ծընողք թշուառ դարձնէք «Ձեր գործած յանցանքն քաւելու համար ողբաք առ Աստուած, «Աստուած ի՛նչ տնի երբ դուք ձեր կեանքն իսկ ճանաչել չ'գիտէք

«Գացէ՛ք, անմիտնե՛ր, գացէ՛ք նիրհելու զըծոխքի խորքում, Ձի ձեր ձեռքերով կեանքը իրապէս զըծողք դարձրեք, Աստուած բախի է՛ բարի ըստեղծած ամէնն աշխարհում, «Դուք եղաք չարը՝ եւ նրան չափով պէտք է չարչարուէք:

«Աշխարհը ձեզի եւ հարուստին էլ մերկ է արգասում, Բանականութիւն՝ խելք ու ըզգացում, Աստուծոյ պարգեւ... Այս անհասար ապրելակերպը՝ դուք էք ըստեղծում, «Ձի Աստուած մահով հարուստին եւ ձեզ բանայ մի արե...»

« Հաւասար կեանքով՝ թ'ուզում էք ապրիլ եւ յաղթել չարին, Վերցրեք այն ախտերն որ թշուառութեանց պատճառ են լինում Ձեր չարչարանքին մէկ մասն էլ տուէք «ձեր հարուստներին» «Որպէսզի Աստուած էլ հանգարտ մնալով հրճուի երկընքում:

Ձայնը դադարուեց, փակուեց կամարն էլ երկընքին հերձուած Մրտայլը պատեց հովտի երկայնքին, խոր լըռութիւնով... Կոուի դաշտին վրայ ինկած թշուառներն սեւ հողը գրկեց՝ Շարունակեցին պալարուել «պատած իրենց արիւնով...»

Ի. Ղ. ՔԱՆԿՆԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ
Գահիրէ 25 Փետր. 1914

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ԹՂԹԱԲԵՐ

ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԽՄԱՐՈՒԹԵՆ ԱՌԹԻՒ

Ընկերական ու հասարակական հասարակությունը խիստ հարգելի արարած է...

Տարուան մէջ հազիւ երկու կամ երեք անգամ պատահի որ ան ալ միայն հայաշատ քաղաքներու մէջ...

Ստանդարտ միջոցներով արտադրուած իրերը արտադրողներու կողմէն...

Պատահաբար որ հանդիպել իր լրացուցիչ մասնաւոր մասն ալ ունեցաւ...

Մեծ մանուկին կը յաջորդէ անաւելի ծննդաբան, ա՛յ անելի զաւեշտ կանաչ...

Մեծ մանուկին կը յաջորդէ անաւելի ծննդաբան, ա՛յ անելի զաւեշտ կանաչ...

ամբողջը՝ հեղափոխութեան պահանջները...

Անպատասխան լուսաւորութիւն. — Ի. սահակեանի (Ռուսահայ գրագէտ քաղաքագետ) մէկ արձակ քաղաքագետութիւնն է...

« — Եւ պէտք է համոզուիլ որ, Հայրենակիցներ, ազգերու անցեալ կեանքը կամ փառքը որքան ալ պատմական ու պատուական լինի... »

Չուտ ազգային բնոյթ հանգամանք ու համար վայելող այս տեսակ անյոյր տոնախմբութիւններու ատեն կուտակեցական բանաւորութիւնը ու պոթկուտներով անխորհրդաբար թուումներ ընել պատշաճութենէ զուրս ծայրայեղութիւն զգուցելի պարագայ մը չէ՞ :

Չեմ գիտեր թէ ի՞նչպէս ակնկալել ժողովուրդին որ միշտ վերաբերուած է ու զոտնորէն զգածուած, իրեն համար սուրբ ու նուիրական եղող նախնիներու կամ անոնց զաղափարներուն դէմ եղած թիւսբանակումներուն, Ա. մէջ պարագայի տակ բուն պատասխանատուները թողալու են որ ազգային տոններու առթիւ փոխանակ իւրաքանչիւր կուտակեցութենէ մէկ մէկ կարող անհատ ընտրելու, կը ձգէ որ կարգ մը կրկնակալ « հոս » ներ առիթն օգուտ քաղելով կոյր ու պախարակելի մոլեռանգութեամբ եւ արմատապէս թողած դատողութեամբ զուրս տան իրենց թունաւոր շունչն ու հեղձուղի մաղձը :

Ես իրեն Դաշակցական մէկ փոքրագոյն գործակատար ինչպէս կ'ընեն ըլլալ Պր Աստիւտիսը, կը փոխաբերել որ գոնէ զուս համազգային հանդէսներու կամ ժողովներու մէջ գիտնայինք ժողովուրդի զգացումները փոխախելու, զայն սիրաշահելու եւ փոխանակ անոր վառ երեւակայութիւնները խաթարելու, ջանայինք անելի եւս մարմնացնելու գաղափարական ոգին անոր մէջ, քանի որ այդ միեւնոյն ժողովուրդն է որ կը ծնունի ու կաճի վարդանները, Ժիրայրները, Անդրանիկները, Շաքէները եւ նազէնիները : Պարծի՛նք ուրեմն ո՛չ թէ կուտակեցական անուշով՝ այլ Հայ թեղին, Հայ

ժողովուրդին անունով, եւ այն ատենը միայն, փոխանակ ձեռքով ոտքով « հորիք է՛ վա՛ր իջի՛ք » իման անտեղի իրարանցումներու, նա պիտի ըսէ. — Ուսեցէ՛ք պարոն, խօսեցէ՛ք, որովհետեւ նուիրական ու պաշտելի հայրենիքի անուշաթուր շունչն է կարծես որ կը փչեն ձեր մեղքաւոր շրթունքները : Հաւատացէ՛ք ասոր :

Քոստանցայ Ծ. Ա.

ՅՕՐԹՕ ԷՎԼՕՆ

ՇԱՐՈՒ ՊԵՅԵ ԷՒ ՆԷՀՏԵՅԵ Փառաքիչի վաճառատան դիմաց Բարձր Բոստալ Լուսանկարներուն տուգինան 10 զրուշէն :

Ե Ա Պ Է Լ Է՛ Ծ՛՛՛

Ն Մ Մ Ա Կ Ս Ո Ւ Փ

ԳՈՍԱՆՑՈՒ (Ռուսահայ) — Ստացուած է 26ր 20 փետր. թուակիրն : Շքեւորակալութիւն 26ր հոգածութեանը համար : 26ր առաջարկած պայմաններով ձեր ուզածին չափ պիտի դրուի :

Տեղւոյս հայ պետական եւ կարեւոր անձնաւորութեանց լուսանկարները ներառեցեալ պիտի հրատարակուի « Արշալոյս » մէջ, եւ անկէ գիրքի պիտի վերածուի « Միլիթիս » Տարեցոյց — Ուղղեցոյց անունով : Աւելորդ է ըսել, հրատարակուած լուսատիպերուն կենսագրականները չպիտի հրատարակուին իրենց պատկերներուն հետ :

Յաջորդ թուով պիտի ունենաք նուպար փաշան եւ յետոյ անոր Աղէքսանդրոյ Յիշատակարանը եւ յաջորդաբար ուրիշներ :

Ն. Բարձրութիւն Ոտիվին լուսանկար պարունակող թերթերէն վերջում տին կը զրկենք : Մտ օրէն սպագրուած պիտի զրկենք նաեւ Նորին Բարձրութեան այդ առթիւ Արշալոյսի Տնօրէնին ուղղած գնահատական մէկ նամակին գրուած : որպէսզի տեղւոյը ընթերցողները լաւ գիտնան թէ՛ ի՛նչպիսի ժողովրդագետք վեհապետի մը հովանաւորութեան ներքեւ կ'ապրին Եգիպտոսի Հայերը : Պէտք է այդ թերթերէն շատ թուով տարածելու փոխը ունենաք :

Այս թղթաբերով վերադառնալ կը զըրկենք նաեւ Ն. Վ. Պօղոս նուպար եւ Արթիւր Եագուպ փաշայի լուսանկարները պարունակող թերթերէն :

Յետ այսու ամէն թուով մէկ մէկ լուսանկար պիտի ունենաք ձեր յայտնած փոփոքներուն համաձայն եւ այս մինչեւ այս տարեշրջանի վերջը : Եթէ մեր Եգիպտոսի ոչ. հայ երեւելիներուն լուսանկարներն ալ չանկեկանութիւն ունին, հաճեցէք ծանուցանել անոնցմէ ալ պատասխանելու համար : ՆԻՐՈՒՄԻԱ (Կիպրոս) Յ. Ա. — Շքեւորակալութեամբ ստացուած է ձեր 12 Մարտ թուակիրն : Շնորհակալութիւն ձեր շնորհաւորութեանցը փոխան : « Բայց որպիսի անվատ կամ ձեռքի եւ անկաշտ նկարագիր. կըսէք, հակառակ նիւթական ներդրութիւններու եւ ստորին արտադրութեան կողմէն դեմ մղուած պայմանները : կը յարատեւէք ձեր ազնիւ պայքարին մէջ. մշտադաւար երիտասարդութեամբ եւ անպարտելի ուժով : »

Այս անգամուան յաջորդութիւնս ալ զժողովութիւններու չափազանցութեանը կը պարտիմ, որուն մասին յարմար առթիւ : Շնորհակալութեամբ պիտի ստացուին ձեր յօդուածները : Ս Է Լ ա մ է՛ Ծ՛՛՛ :

ՄԱՆՈՒՑՈՒՄ

Աղէքսանդրոյ եւ Գաւառներու համար գործակալներու պէտքը կայ : փափաքողները կրնան դիմել « Արշալոյս » ի խմբագրութեան հասցէին :

Ա. Ա. Գ. Ա. Յ. Ե.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Նախորդ թուով ծանուցած էինք Աղէքսանդրոյ Ընկերութեան Գործ. ժողովին համար համեմատականի մնացած ընտրելեաց ցուցակը :

Այս կիրակի, 124 ընտրողներով կատարուեցաւ ընտրութիւնը եւ համեմատականներէն ընտրուեցան, Տիար Ծ. Գարալանեան, Յ. Եագուզեան, Մ. Զիվանեան, Գ. Նիգոօթեան եւ Լ. Էնֆիլէճեան :

Դիւանի ընտրութիւն ալ կատարուեցաւ, բայց քանի որ զեռայս խմբորդին մանրամասնութեանցը մէջ պիտի մտնենք, առիթ պիտի ներկայանայ զանոնք եւս վերջու չելու :

ՀԵՌԱԳԻՐ

Յրաւասյի Երեւանի Նախարարին կիւր՝ Գայիօ՝ մարդասպան կրչայ :

Փարիզեան « Տիկար » օրաթերթը խտորէն կը յարձակի եղիւր Յրանայի Երեւանի Նախարար Պ. Գայիօի վրայ : Նախարարին կիւր՝ Տիկար Գայիօ՝ կը ներկայանայ թերթին խմբագրատունը եւ լուր զրկելով խմբագրապետ Պ. Գալմէթին՝ ժամէ մը աւելի սպասելէ յետոյ ներս կընդունուի եւ անմիջապէս թէվօլվէրով կը զարնէ Գալմէթը որ քանի մը ժամէն կը մեռնի : Տիկար Գայիօ Սէն — Լազարի կանանց բանտը կը տարուի :

ԶԵՆՈՒՑՈՒՄ

Պէտք է ինկասի ունենայ թէ՛ Արշալոյսի բաժնետիրացուրեանց արդի հրատարակուած սուցակները, զորս պիտի ստուգուի Մեծ. Տիար Սարգիս Պիլպիլեան, 1401 թիւին կիւրիս, եւ այդ թիւին յստաւ եղող ո՛րեւ սուցակներ արժէք ունենալէ զուրկ է քսցարձակապէս :

Այս առիթէն կ'օգտուինք միանգամայն ծանուցանելու թէ՛ անոնք որ կը փափաքեն « Արշալոյս » թերթին բաժնեգրելու վճարել, կրնան գիմել Հայկական Պանդոկի սեփականատէր եւ վարչութեան Գանձապետ Սարգիս Պիլպիլեանէ քննարկել, որ պատրաստ է իրենց պէտք եղած ստացականը տալ : Աւելորդ է ըսել թէ՛ Հայկական Պանդոկը (Hotel d'Arménie) կը գտնուի Աթապա — Էլ — Ոտարա, Շեքայի վաճառատան քովը եւ թիւրիսի նորակառոյց ու հոյաչէն վաճառատան եւ Սան Միլ Արթիզի գիմաց :

Տիար Ս. Պիլպիլեան գանձապետութեամբ տրամադրելի է կէս օրէ յառաջ ժամը 10—12, եւ կէս օրէ յետոյ ժամը 4—6 :

Իսկ « Արշալոյս » Տպարանին վերաբերեալ գործերու եւ յանձնարարութիւններու համար դիմել Տիար Սարգիս Թորոսեանին, ի Շարա Մուշաթեան Ալի Հարթ էլ Մատապէկ էլ Գատիմէ Թիւ 40 Տիար Միլաս Շիրինեանի յարկաբաժնին մէջ :

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ՊԱՎԱԿԻ ՓՈՂՈՑ ՆԱԽԻՆ ՓԱՄԲԱԼ

Վ Ա Ճ Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

ԵՂԱՆԱԿԻ ԵՂՐԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՌՐՈՒԹԻՒՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ ՓՈՒՔԱՑԻՔ ՕԳՏՈՒԼ

Կ. Պօլտոյ ամենամանօթ թիֆլիսի Տան Գահիրէի նորահաստատ Մանանահիւզն է .

ՔՐԷՏԻ ՏՕՆՍԻՑԷ ԷԺԻՐՍԻԷՆ
16 Մարտ 1914
1886ինը 362րդ . վիճակահանութիւն
Ս. ՊԱՐԳԵՆԻ
Թիֆ 16 772 կը շահի՝ 50,000 Տրանգ
Հետեւեալ 25 թիւերը կը շահին 1000 Տր.
6014 120381 194760 280252 327377
25589 129097 205887 284206 341874
68709 164231 286164 300129 341563
77330 166413 253567 315472 376894
81861 184051 279519 321838 395115
Բ. ՍԷՌԻ
131րդ. վիճակահանութիւն
Ա. պարգեւ 515, 361 50,000 Տր.
Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Տր.
411616 460750 566750 648074 735675
422156 494168 578930 661991 760261
432308 506052 599525 684183 765400
451803 539099 613681 692676 775610
459517 549960 622907 711402 789284
Գ. ՍԷՌԻ
40րդ. վիճակահանութիւն
Ա. պարգեւ 124762 կը շահի 100,000 Տր.
Թիֆ 391, 580 կը շահի 10,000 Տր.
Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Տր.
8600 37872 88766 166050 273016
18664 38907 89436 171091 284026
25587 46689 105695 194309 305552
36014 53137 157558 206184 379640
36816 75424 160998 266461

ՎԻՃԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂՔԱՍԱԽՆԱՍ ԸՆԿՐՈՒԹԵԱՆ

ԳԱՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

281 դ թիբաժ
Գահիրէ, 15 Մարտ 1914
Առաջին պարգեւ

Թիւ	3071	Ղրջ	Ողջ	4000
"	2	"	"	400
"	10043	"	"	200
"	15937	"	"	100
"	1011	"	"	"
"	1045	"	"	"
"	5966	"	"	"
"	12766	"	"	"
"	4748	"	"	"

Հետեւեալ 40 թիւերը կը շահին 700-
կան դրուշ :

135	380	1312	1547	1799	2156
2290	2360	3537	3855	4195	4681
4953	6051	6168	6198	6520	7211
7387	7436	7660	7924	8074	8382
8509	8733	9140	10545	10631	
10903	11002	11143	11366	11489	
13591	13961	14560	15294		
15491	15635				

ՏՊԱՐԱՆ


Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

ԱՐՇԱԼՈՅ Տպարանը՝ Արսովեայ եգիպտական Կառավարութեան ներքին Գործոց նախարարութեան, ամենամեծ խնամով կը տպագրէ .

1. — Արսովեայ Օրաքերքեր, Հանդեսներ, Պրօշիրներ, Պարբերականներ եւ մանաւանդ Կիրքեր .
2. — Վաճառականական տեսքեր՝ եւ գրասենեակի ամէն տեսակ տպագրական պիտոյքներ՝ ամէն չեզոքով .
3. — Յայտարարութիւններ, շրջաբերականներ, Ամսականաւորներ, Ըագրիւրներ, եւ այլն .
4. — Հարսանեկան տուներ, մահազոյներ եւ այլն .

ԱՐՇԱԼՈՅ Տպարանին հասցեն է, ց'նոր սնորհնորիւն . Եւրաս Մոնախնէս Սի . Սիքստէյ երկարող քրասկիչի գծին վրայ, Հարթ - Էյ Մասսայէկ - Էյ Գասիւն, թիւ 40, Տիար Միլաս Երիկնեանի յարկաբաժնին մէջ .

THE 'SINGER' MANUFACTURING Co



Շարա-էլ-Մարապի Տպիզ Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Սինգերներն են եւ ասանցով մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է .


400 է աւելի վկայական եւ մեքենաներով վարձատրուած, Եւրասիայի մեքենաներ .

ԱՄԵՆԷՆ ՄԵՆՎ ԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիւրքիայի արտեստանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԴՂՅՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե. Բ. ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Սինգերի ներկայ յանկանչին



Չրի դասեր և նորոգութիւններ, յաճախորդաց տուններուն մէջ .

Վճարմանը դիւրութիւն

Փոխանակութիւն հիւսիսային յետադարձութիւն ամեն կարգի մեքենայից

Գիւն ՉԱՓ

ԱՇԽԱՐՀ - ՈՂՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆՈՒ

ՃԱՇԱՐԱՆ ՎԻՍՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՋԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱՒԵՏԻՍ ՊՕՊԱՃԵԱՆ

Ա՛րք ճաշարանին մէջ կը պատրաստուին Եւրոպական եւ Արիւսեւելեան բնորոշ կերակուրներ . պանդոկայի երիտասարդները ելիմ անգամ մը այցելելն մեծապէս գոհ պիտի մնան մասնաւոր գինեւէն և սպասակութեանէն . 14

Ի. Ա. ԵՐԱՆ

Հրատարակութիւններ

ԱՅՄԻՆԱԿԱՆ ԳԻՐՔԵՐ ԱՄԷՆԻՆ ԱԼ

- Բառարան հայերէն-անգլիերէն սալ . 50
- Բառարան անգլիերէն-հայերէն » 75
- Հայ. անգլ. եւ անգլ. հայ. միասին տպ . 1 -
- Պատ. գրուցարարական հայ. անգլ » 150
- Գործնական ստուգարաններ » 150
- Սեռային ստուգարաններ » 125
- Գործն. եւ սեռ. ստուգ. միասին » 2 -
- Ժողովրդային երգարան » 2 -
- Երգարան եւ սեռ. ստուգ. միասին » 3 -
- Երգ. եւ գործն. ստուգ. միասին » 3 -

Հասցէ՝ E. A. YERAN
P. O. BOX 84, Sta. A.
Cambridge, Mass.

ՄԵՐ ՀԱՒԱՔԱԾՕՆԵԼԸ

Ոմանք մեզմէ ներկայ շրջանի Ա. թիւէն սկսեալ հաւաքածօներ կուզեն . Ասոնք ունենալու համար պէտք է գիտնել ո՛չ թէ Վարչախոյսի տպարանը, այլ՝ Հոթել Տ'Արմէնի . ուրուն գոնապէս պիտի գոհացնէ զիրենք .

Արշալոյսը ձեռքէ գնել ուզողներն ալ կրնան միեւնոյն տեղը գիտնել .

ՄԱՍԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ապտ Էլ Ազիզ Ապտինի Կարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գոսթիւն մը ունենալու համար զանազան տեղեր գիտած ու գտնու միտցած են, թող անշարժ մը մեր վաճառատունը այցելեն . պատրաստ եմ իրենց հետ պայմանաւորուելու՝ եթէ իրենց յանձնարարութիւնը իր գոհացուցիչ չ'պտնեն . կանխավճարը ամբողջովին ետ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հազուայէն փոխադրողներուն համար, նըպաստաւոր առիթ մը պիտի ըլլայ .
Ապառիկ պատգամները նկատուող թեան շին առնուիլ, եւ անոնք որ իրմ կը գիտնեն, զերբաւ կրնան ըմբռնել ապագային տարբերութիւնները .
Մէջ գործի մաքրութեան եւ թէ գիտնալու մասին . 1-50
ՄԱՍԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԻԱՆ ԵՒ ԸՆԿ .
ԱՂՔԱՍԱԿԱՆ (Եգիպտոս)

Շարաթական կանոնաւոր երթեւեկ . Միայեալ նահանգներու, Գա. նատայի եւ Հարաւային Ամերիկայի համար .

Գաղթականներու համար չափաւոր գին .

Աշքի քննութիւնը ճիշտապէս կը կատարուի տեղւոյս մէջ . Մանրախնայ ստեղծութեանց հասնուր զիւնը Գործակալութեան . ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԱՐԱԿ
Հեռագրական Հասցէ — ԼԵՆՕՔՕ
Փոստարկ թիւ 897

Թուրքիոյ գաւառներու մէջ փոխ - գործակալներ կը փնտռուին

Արսովեայի ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅ Լրագրոյ